# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

13 դեկտեմբերի 2022 թվականի թիվ 459-Ա

## «ԱՐՄԱԲԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի դեկտեմբերի 13-ի նիստում, քննարկելով «Արմաբա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի նոյեմբերի 23-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 255-Ա հրամանի հիման վրա «Արմաբա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) «TVtrade.am» կայքում (այսուհետ նաև՝ **Կայք**) և https://www.facebook.com/tvtradee/ անվանումով ֆեյսբուքյան էջում (այսուհետ նաև՝ **Ֆեյսբուքյան էջ**) իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 255 արձանագրությունը:

Արտաքին դիտման արդյունքում պարզվել է, որ 2022 թվականի նոյեմբերի 24-ի դրությամբ Ընկերության Ֆեյսբուքյան էջում առկա են հրապարակումներ Ընկերության կողմից առաջարկող ապրանքների բնութագրերի վերաբերյալ, իսկ այդ ապրանքների վերաբերյալ հրապարակումներում, ինչպես նաև Ֆեյսբուքյան էջի «մեկնաբանություններ» դաշտում հրապարակված են այդ ապրանքների զեղչված գները:

Արտաքին դիտման արդյունքում պարզվել է նաև, որ Ընկերության Կայքում նույնպես հրապարակված են Ընկերության կողմից առաջարկվող ապրանքների

վերաբերյալ հրապարակումներ, իսկ հրապարակումներին կից առկա են այդ ապրանքների նկարագրությունները և զեղչված գները:

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 007750 գրությամբ (այսուհետ նաև՝ **Գրություն**) Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ՝ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել տեղեկատվություն Ընկերության կողմից 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում (այսուհետ նաև՝ ***Հաշվետու ժամանակահատված***) հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ:

ՊԵԿ-ը, ի պատասխան Գրության, 2022 թվականի դեկտեմբերի 5-ին Հանձնաժողով է տրամադրել համապատասխան տեղեկատվությունը:

Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչությունը 2022 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՄՊՀ-007945 զեկուցագրով առաջարկել է Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ՝ հայտնելով, որ Ընկերության կողմից Կայքում և Ֆեյսբուքյան էջում 2022 թվականի նոյեմբերի 24-ի դրությամբ հայտարարվել է զեղչ՝ նվազեցված գնի մասին հրապարակմամբ, մինչդեռ.

1. Ընկերության կողմից առաջարկվող ապրանքները Հաշվետու ժամանակահատվածում իրացվել են նույն գնով.
2. Ընկերության կողմից ակցիայի իրականացման մասին սպառողներին իրազեկելիս ակցիայի բովանդակությունը չի պարունակել ակցիայի իրականացման ժամանակահատվածը՝ մեկնարկի և ավարտի օրերը.
3. ակցիայի ժամանակահատվածը փաստացի գերազանցում է երեք ամիսը.
4. ակցիայի վերաբերյալ հրապարակումներում առկա է «...: Դե ինչ, հետաքրքրեց Ձեզ մեր առաջարկը, ուրեմն մի՛ հապաղիր: Պատվիրեք հենց հիմա ...:» արտահայտությունը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ սույն օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վերոնշյալ նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ Օրենքի 16-րդ և 21-րդ հոդվածները, բարեխիղճ մրցակցությունն երաշխավորելուց բացի կոչված են երաշխավորելու սպառողների իրավունքները, այդ թվում՝ սպառողի՝ ապրանքների մասին ճշգրիտ տեղեկատվություն ստանալու իրավունքը: Մասնավորապես՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից իրացվող կամ գովազդվող ապրանքի վերաբերյալ տվյալների կամ տեղեկությունների թերի, կեղծ կամ ոչ լիարժեք լինելու կամ դրանում իրացվող կամ գովազդվող ապրանքի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ որևէ տվյալի կամ տեղեկության բացակայության յուրաքանչյուր դեպքում Օրենքով տնտեսավարող սուբյեկտի կողմից կատարված գործողությունը կամ դրսևորած վարքագիծը դիտարկվում է որպես հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցություն:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ակցիան վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման ընթացքում վաճառողի կամ ծառայություն մատուցողի կողմից (այսուհետ նաև՝ **ակցիա իրականացնող**) իրականացվող միջոցառում է, որն ուղղված է սպառողների շրջանում ապրանքների կամ ծառայությունների առաջխաղացմանը կամ իրացման ծավալների մեծացմանը:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ակցիան իրականացվում է հետևյալ եղանակներով.

1) զեղչ.

2) ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառում:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զեղչը ակցիայի մեկնարկին նախորդող մեկ ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման միջին գնի կարճաժամկետ նվազեցումն է, որն իրականացվում է ապրանքի կամ ծառայության գնի նվազեցման տոկոսային արտահայտման կամ նվազեցված գնի մասին հրապարակային տեղեկացմամբ և ենթադրում է զեղչի ավարտից հետո մինչև զեղչի կիրառումը սահմանված գնի վերականգնում, բացառությամբ եթե նախորդ գնից տարբերվող այլ գնի սահմանումը պայմանավորված է տնտեսական պայմաններով (գործոններով):

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապրանքի կամ ծառայության գնի տոկոսային նվազեցումը կատարվում է ակցիայի մեկնարկի պահին նախորդող մեկ ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման միջին գնից:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.5-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ զեղչը յուրաքանչյուր դեպքում կարող է տևել ոչ ավելի, քան մեկնարկի պահից երեք ամիս:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ակցիա իրականացնողն ակցիայի մասին սպառողներին իրազեկում է տեղեկատվության տարածման ցանկացած եղանակով՝ ցուցանակով, ցուցափեղկով, զանգվածային լրատվության միջոցներով և սպառողներին հասանելի այլ միջոցներով, որոնցից առնվազն մեկը պետք է պարունակի՝

1) ակցիայի էության հակիրճ նկարագրությունը.

2) ակցիայի ենթակա ապրանքների և ծառայության հստակ շրջանակը կամ դրա հասանելիության աղբյուրը.

3) ակցիայի իրականացման ժամանակահատվածը՝ մեկնարկի և ավարտի օրերը.

4) ակցիայի կիրառումը պայմանավորող պայմանների (եթե այդպիսիք առկա են) վերաբերյալ տեղեկատվությունը կամ դրա հասանելիության աղբյուրը:

Տվյալ պարագայում Ընկերության կողմից հայտարարվել է զեղչ՝ նվազեցված գնի մասին հրապարակմամբ այն դեպքում, երբ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքները Հաշվետու ժամանակահատվածում իրացվել են նույն գնով: Ավելին, Ընկերության կողմից ակցիայի իրականացման մասին սպառողներին իրազեկելիս ակցիայի բովանդակությունը չի պարունակել ակցիայի իրականացման ժամանակահատվածը՝ մեկնարկի և ավարտի օրերը, իսկ ակցիայի ժամանակահատվածը փաստացի գերազանցում է երեք ամիսը, ինչպես նաև ակցիային մասնակցող ապրանքատեսակների նկատմամբ հայտարարված զեղչերն ընդհանուր առմամբ չեն հաշվարկվել տվյալ ապրանքատեսակների՝ ակցիային նախորդող ամսվա միջին գներից: Բացի այդ, Ընկերության կողմից իրականացվող ակցիայի վերաբերյալ

հրապարակումներում առկա է «...: Դե ինչ, հետաքրքրեց Ձեզ մեր առաջարկը, ուրեմն մի՛ հապաղիր: Պատվիրեք հենց հիմա ...» արտահայտությունը:

Ընկերության նման վարքագիծն առերևույթ կարող է պարունակել հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով և 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Արմաքա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 13
Երևան